

ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՍԵԾ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գերմանացի նշանավոր գրող, հրապարակախոս, իրավագիտության դոկտոր, հումանիստ Արմին Թեոֆիլ Վեգները ծնվել է 1886 թ. հոկտեմբերի 16-ին Վուպերտալ էլբերֆելդում։ Ուսանել է Բեռլինի, Բրեսլաուի և Յյուրիխի համալսարաններում։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ա. Վեգները աշխատել է Խուրթիայում, գերմանական ռազմական միսիայի սանիտարական ծառայությունում։ 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին շրջագայել է Փոքր Ասիայում, այցելել է Հալեպ, Բաղդադ, Դեր-Կոր և ականալան է եղել արևմտահայության սարսափելի կոտորածներին։ Այնուհետև աշխատել է ֆելդմարշալ ֆոն դեր Գուլցի բանակի շտաբում, տեսել է անապատներ տեղահանված հայերի համակենտրոնացված ճամբարներում կատարված ուժերազորությունները, հանդիպել ու զրուցել է բազմաթիվ հայերի և թուրքերի հետ, որոնք իրեն պատմել են հայերի ցեղասպանության զարհուրելի մանրամասնությունները։

Ականատես լինելով երիտթուրքական իշխանությունների կողմից մահվան ճամբարներում կազմակերպված հայերի բարբարոսական խոշտանգումներին, լուսանկարում է այդ սարսափազդու տեսարանները, դրանք որպես հավաստի վավերագրեր պատմության դատաստանին հանձնելու համար։ Թուրքական իշխանությունները բռնագրավում են նրա ավելի քան 2000-ի հասնող մեղադրական լուսանկարների մեծ մասը։ Ա. Վեգներին հաջողվում է փրկել դրանց մի մասը և ցուցադրել Գերմանիայում իր իսկ հրապարակային ելույթների ժամանակ ու հասարակական վայրերում։ Հայոց Մեծ Եղեռնի մասին գրում ու հրապարակում է մի շարք աշխատություններ, բազմաթիվ հոդվածներ։

Ա. Վեգների փաստագրական հարուստ ժառանգության մեջ մեծ տեղ են գրավում նրա վկայությունները հայոց ցեղասպանության մասին, վկայություններ, որոնք անհերքելի են ու ցնցող։

Հայոց Մեծ Եղեռնի մասին հուզիչ վկայություն է, օրինակ, Ա. Վեգների «Հայ մորը» ակնարկը։ Դիմելով թուրք ռասիստների կողմից Միջագետքի անապատները արտաքսված տանջահար հայ կնոջը, Վեգները ասում է. «Դու մեկն էիր այն հազարավոր հայերից, որոնցով լցված էր ամբողջ հարթավայրը։ Սուխ էին արձակում տարագիրների խղճով վրանները, և թվում էր, թե դաշտից ամպի պես ճահճատենդի գոլորշի է բարձրանում։ Դու ծվարել էիր թշվառության ճամբարում՝ բերանքսիվայր փոված տղամարդկանց կողքին, որոնք այնպես ծանր էին շնչում, կարծես վազելով լեռ էին բարձրացել, կանանց հետ, որոնց երկար ու խռիվ մազերը տրորվում էին անցնող-դարձողների ոտքերի տակ։ Մարդկանց մարմինները թվում էին անիրական։ Չորս կողմ տարածված նրանց ձեռքերն ու ոտքերը կացնահար ճյուղեր էին կարծես։ Այդ մարդկանց հոգիները սավառում էին հարազատ վայրերում, մինչդեռ քնի մեջ խորասուզված նրանց մարմինները երազում շարունակում էին իրենց գաղթը, քարշ գալիս դեպի անհայտ հեռուները...»

Թիկն էիր ավել իրերի կապոցին: Քո մեջ կար անխախտ վճռականություն՝ առաջ տանել զավակներիդ անապատով մեկ, լեռնանցքից լեռնանցք, կայանից կայան, աղբյուրից աղբյուր՝ միշտ հավատով, միշտ հույսով լի...»¹ 1919 թ. հունվարին, Ա. Վեգները գրել ու հրապարակել է «Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ պարոն Վուդրո Վիլսոնին»՝ ուր կարդում ենք. «Որպես մեկը սակավաթիվ այն հվրոպացիներից, որոնք սկզբից ևեթ ականատես են եղել Անատոլիայի ժողովուն քաղաքներում, բերքաշատ դաշտերում նրա (հայ ժողովրդի—Ս. Ս.) զարհուրելի բնաջնջմանը և Եփրատի ափերին, Միջագետքի անապատի քարքարոտ ավազուտներում նրա խղճուկ մնացորդների ոչնչացմանը, ես համարձակվում եմ Ձեզ ներկայացնել թշվառության ու սարսափների այն պատկերները, որոնք ես տեսել եմ իմ սեփական աչքերով շուրջ երկու տարվա ընթացքում, և որոնք երբեք չեն ջնջվի իմ հիշողությունից»:

Նամակում ընդգծված է. «Երբ թուրքական կառավարությունը 1915 թ. զարնանը ձեռնամուխ եղավ երկու միլիոն հայերին երկրի երեսից բնաջնջելու իր հրեշավոր ծրագրի իրագործմանը, Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում ոչ ոք չխանգարեց Թուրքիայի խավարամիտ տիրակալներին իրականացնելու այն տանջալից խոշտանգումները, որոնք կարող են համեմատվել միայն խելագար հանցագործի գործողությունների հետ: Այդպես նրանք մի ամբողջ ժողովրդի՝ տղամարդկանց ու կանանց, ժերոնիների ու երեխաների, հղի մայրերի ու ծնկեր մանկիկների քշեցին արաբական անապատները միայն մի նպատակով՝ սովամահության մատնել բոլորին»²:

Որպես ականատես Վեգները վկայում է. «Տղամարդկանց կոտորում էին զանգվածաբար, խմբերով, կապկպում էին միմյանց շղթաներով կամ պարաններով և հրում գցում գետը կամ նետում ժայռերից: Կանանց ու երեխաներին վաճառում էին հրապարակային աճուրդներում, ծերերին ու դեռահասներին մահակների մահացու հարվածներով քշում էին հարկադիր աշխատանքների: Նրանք դրանով էլ չէին բավարարվում: Իրենց կեղտոտ ձեռքերով զրկելով հայությանը իր առաջնորդներից ու ներկայացուցիչներից, օրվա յուրաքանչյուր ժամ ուղղակի անկողնուց հանելով կիսամերկ մարդկանց քշում էին մահվան ճամբարներ, թալանում էին նրանց տները, կրակի մատնում բնակավայրերը, ավերում էին եկեղեցիները՝ վերածելով դրանք մզկիթների, բռնազրավում էին անասուններն ու սայլերը, տանջահար մարդկանց ձեռքից խլում էին հացի վերջին կտորները, նրանց վրայից հանում էին հագուստը, վայրենաբար պոկում ու յուրացնում էին նրանց թանկարժեք զարդարանքները»³:

1921 թ. հունիսի 2—3-ին Բեռլինում տեղի ունեցած հայտնի դատավարության ժամանակ նա հանդես եկավ որպես վկա և երդվյալ ատենակալներին առաջարկեց ցուցադրել հայկական կոտորածների ու տեղահանության իր իսկ նկարահանած ողբերգական պատկերները: Բացի դրանից, հայերի ցեղասպանության վերաբերյալ Ա. Վեգների վկայությունները համառոտ ու պատկերավոր ձևով շարադրված են 1921 թ. հրատարակված «Թալեթի փաշայի դատավարությունը» սղագրության առաջաբանում: Այնտեղ նա նշել է. «Հայ ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն էր այդ պատերազմում և թերևս մարդկության ամբողջ պատմության մեջ: Կատարված հանցագործությունն այնքան հրեշավոր է, որ նրա արձագանքները ցնցեցին նույնիսկ պատերազմի ժամանակներում ու տարածվեցին բոլոր երկրներում... Նվ

¹ «Արեգակ» ամսաթերթ, բացառիկ նվիրված Մեծ Եղեռնի հիսնամյակին, Լոնդոն, ապրիլ 1965, էջ 23—24:

² A. Wegner. Offener Brief an den Präsidenten der Vereinigten Staaten von Nord-Amerika Herrn Woodrow-Wilson über die Austreibung des Armenischen Volkes in die Wüste. Berlin—Schöneberg, 1919, S. 2.

³ Նույն տեղում, էջ 3:

անհա հայ անհայտ ուսանողի ատրճանակի կրակոցը, որն սպանեց Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարարին ու դրա հետ կապված դատավարութունը ասբողջ աշխարհի և նաև գերմանական ժողովրդի ուշադրությունը սեփական համաշխարհային պատերազմի ամենաարյունալի էջին, ակնհայտ դարձավ ճշմարտությունը՝ երիտթուրքական կառավարության կողմից մի ամբողջ ժողովրդի ծրագրավորված բնաջնջումը։ Իրագործությունների զարմանալի հորձանուտում տեղի ունեցավ այն, որ փաստերի ծանրության տակ տառապող ու լուսկյաց զոհը ակամայից դարձավ մեղադրող և մեղադրյալի աթոռին այլևս չկա Սողոմոն Թեֆլիդյան, այլ կա արյունաշաղաղ ննջեցյալի սավերը, այնպիսի խորհրդավոր իրավիճակի խորիմաստ հաստատում, երբ մեղավորը ոչ թե սպանողն է, այլ սպանվածը⁴։

Բնութագրելով Բեուլինյան դատավարությունը, Ա. Վեգները այն կարծիքն է հայտնել, որ իր առանձնահատկությամբ և որ գլխավորն է՝ ընդունած արդարացի վճռով, այն համաշխարհային պատմական նշանակություն ունի. «Այո, ես այն կարծիքին եմ, — դրում է նա, — որ դա պատմության կամքն էր, երբ զոհերից մեկի ձեռքերով սպանվեց Թալեաթը...»։

Ինքը՝ Սողոմոն Թեֆլիդյանը՝ միայն խորհրդանիշ էր, մի հյուլե, որի մեջ խտացված ու ցայտուն արտահայտված էին հայ ժողովրդի վերքերը, նրա ազգային ցավը, խիղախ ինքնապաշտպանությամբ արդարացի հաստատման նրա տենչը⁵։

Թուրքական ոճրագործությունների և հայկական կոտորածների ականատես Ա. Վեգները իր ուսումնասիրությունների ու քաղաքագիտական վերլուծությունների հիման վրա այն հետևությունն է արել, որ հայերի ցեղասպանությունը ծրագրված էր վաղօրոք, «Իթիհատ վե Թերաքքի» կազմակերպության կողմից։ Այդ հրեշավոր ծրագիրը իրագործվեց գործադիր իշխանության կողմից, որի գլխավոր դեմքը ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան էր։ Ա. Վեգները հաստատականորեն մերկացնում է թուրքական իշխանությունների բոլոր տեսակի պատճառաբանությունները հայերի տեղահանության և ֆիզիկական բնաջնջման հարցում։ Նա հատկապես բացահայտ անհիմն է համարում «ոսգմական անհրաժեշտությամբ» հայերի տեղահանության վարկածը։ Այդ կապակցությամբ նա գրել է. «Ինչպե՞ս բացատրել արևմտաանատոլիական վիլայեթներից հայ բնակչության բռնի տեղահանությունը, որտեղ հայերի շահագնաց փոքրամասնությունը որևէ վտանգ չէր կարող ներկայացնել, չէ՞ որ նրանք ապրում ու աշխատում էին ուղղակի գործողություններից հարյուրավոր մղոններ հեռու։ Մի՞թե հայտնի չէ ամերիկյան դեսպան Մորգենթաուի առաջարկությունը տեղահանվող հայերին Ամերիկա վերաբնակեցնելու մասին։ Հայտնի է նաև այն փաստը, որ թուրքական կառավարությունը ոչ միայն մերժեց այդ առաջարկությունը, այլ դրանով հաստատեց, որ այսպես կոչված ոսգմական՝ անհրաժեշտությամբ պայմանավորված այդ միջոցառումը միայն պատրվակ էր, որպեսզի քողարկվեր դարի հանցագործությունը՝ աշխատասեր ու բարձր մշակույթի տեր մի ամբողջ ժողովրդի լրիվ ոչնչացումը⁶։

1922 թ. Ա. Վեգները հրապարակում է «Ճիշ Արարատից» դրքույկը, որտեղ կրկին դատապարտելով ու անարգանքի սյունին գամելով հայերի ցեղասպանության կազմակերպիչներին՝ թուրքական բարբարոսներին, միաժամանակ խարազանում է արևմտյան տերությունների հանցավոր անտարբերությունը։

⁴ „Der Prozeß Ta'at Pa'cha. Stenographischer Prozeßbericht mit einem Vorwort von Armin. T. Wegner und einem Anhang“. Berlin, 1911, S. VII.

⁵ Նույն տեղում, էջ VII—VIII:

⁶ Նույն տեղում, էջ IX:

Ա. Վեգները արդարացիությամբ և իրեն յուրահատուկ պատկերավորությամբ մերկացրել է նրանց քաղաքական ու դիվանագիտական խարդավանքները: Նա ի լուր աշխարհի գրել է. «Ի՞նչ արեցին Արևմուտքի հաղթանակած տերությունները իր հավատի ու ոգու համար տանջահարված այդ փոքր ժողովրդին լիակատար բնաջնջումից պաշտպանելու գործում: Թույլ տվեք, Ձեզ, այդ պետությունների ղեկավարներին հիշեցնել Ձեր հանդիսավոր հավաստիացումներն ու երախտավորությունները, որոնք պատերազմի ժամանակ խոստացել էիք Հայաստանին: Թույլ տվեք ինձ մի անգամ ևս հիշեցնել Ձեզ և ողջ աշխարհին ֆրանսիական խորհրդի նախագահ Կլեմանսոյի 1918 թ. հունիսի 14-ին Հայաստանին ուղղված խոսքերն այն մասին, որ մարդկայնության և արդարության օրենքների հիման վրա դաշնակից տերությունները մշտապես իրենց պարտքն են համարում հոգ տանել այդ երկրի ճակատագրի համար: Մի՞թե չեն լսվում, հիշողությունից այդպես արագորեն ջնջվում են Պուանկարեի մեծադղորդ այն խոսքերը, որոնցով նա դիմեց Կիլիկիայում կաթոլիկ հայերի պատրիարքին: Լիոյդ Ջորջը, Ռոբերտ Սեսիլը չհապաղեցին հետևելու նրա օրինակին և նրանցից յուրաքանչյուրը որքան կոշեր են ստորագրել հանուն Հայաստանի ազատության»⁷:

Ա. Վեգները անդրադարձել է հետագա տասնիններին կատարված իրադարձություններին՝ թուրքական զորքերի 1918—1922 թթ. գազանություններին: Իր այդ հրապարակումներում նա հատուկ տեղ է հատկացնում Ջմյուռնիայի ողբերգությանը:

Նա մատնանշել է, որ թուրքական բարբարոսները իսպառ այրեցին դրերի ընթացքում հույների ու հայերի կառուցած այդ գեղեցիկ քաղաքը, վերածելով այն մոխրակույտի: Նկարագրելով Ջմյուռնիայի հայության կոտորածները, նրանց ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ոչնչացումը, Վեգները այն հետևությունն է անում, որ «Հայերի թշնամիները հանդիսանում են նաև մարդկության թշնամիներ»⁸, Պատկերելով Ջմյուռնիայի հայության սարսափելի կոտորածները, նա շարունակում է. «Մենք տեսնում էինք խեղդվողներով լեփ-լեցուն ծովը, փրկության զուր հույսով մարդիկ լողում էին դեպի նավերը, սակայն ալեկոծությամբ ափ էին նետվում նրանց փայտացած մարմինները: Հրդեհի ծխի մեջ թաղված գիշերը ոռնում էր սարսափից, այրվող տներից դուրս էին բերում տղամարդկանց, կանանց և երեխաներին, որպեսզի հանձնեին զնդացիների պատրաստի կրակին: Նահատակվողների ճիշդ խավարի միջով կարծես թե հասնում էր եվրոպական գիշերվա անդորրությունը և այդ ամենը զուգակցվում էր խոր լռությամբ, որն ավելի սարսափելի էր, քան դրան նախորդած ճիշդը:

Երբ այս ամենը կատարվում էր եվրոպական պետությունների նավերի ներկայությամբ, նրանց զորքերի աչքի առաջ, ապա ինչ էր տեղի ունենում երկրի խորքում: Ո՛ւր էին քշում մարդկանց անհամար խմբերին: Լեռների կիրճեր կամ փողոցներում հարկադիր աշխատանք կատարելու, սակայն նրանք զրկված էին ծածկի տակ մնալու իրավունքից և չէին ստանում ոչ մի անունդ: Այդ պայմաններում նրանք մահանում էին սովից ու հիվանդություններից»⁹:

Մերկացնելով եվրոպական պետությունների մեղսակցությունը հայերի ցեղասպանության մեջ, Ա. Վեգները գրում է. «Դա Եվրոպան է, որը մշտապես ձգտում է մի անարդարությունը փոխարինել մյուսով և չի թաքցնում իր ուրախությունն այնպիսի հաջողության առթիվ, որը ձեռք է բերվել տասնյակ հազարավոր անմեղ կանանց ու երեխաների արյան գնով, Եվրոպան, որը գերադասում է վաշխառուական առևտուր անել նրանց տանջամահ անող-

⁷ A. Wegner. Der Schrei vom Ararat. An die Regierungen der sieghaften Völker. Leipzig, 1922, S. 2—3.

⁸ Նույն տեղում, էջ 3:

⁹ Նույն տեղում, էջ 4:

ների հետ, քան փրկել հալածված մարդկային ցեղի բեկորները կործանումից: Այդպե՞ս են կատարում Արևմուտքի հաղթող պետությունները իրենց հանդիսավոր խոստումները: Բավական չէ, որ դուք ձեզ ժողովուրդների իմաստուն ժառանգի համարելով, պատերազմի ժամանակ արյունաքամ հայությունը ստիպեցիք Ձեր կամավորները դառնալ: Ավելին, դուք խանգարեցիք նրիտասարդ հայկական հանրապետությանը ապաստան տրամադրելու եղենունից մազապուրծ փախստականներին: Եվ դա այն բանի համար, որպեսզի անշահահաս երեխաները դուրս չպրտվեն ամերիկյան որբանոցներից և ոչնչացվեն Վանի բնակչության փրկվածները, որոնք ոչ մի վտանգ չէին ներկայացնում Անգորայի կառավարությանն ու թուրքական պարոններին...

Որտե՞ղ է փոքր ժողովուրդների ազատությունը: Մի՞թե Ֆրանսիան չէր զենք տրամադրում Խուրթիային, որն էլ կրակում էր Հայաստանի սրտին...»¹⁰, Ի՞նչ և որքան հրապարակումներ ունի Ա. Վեդները Հայկական հարցի և հայերի ցեղասպանության մասին: Այդ հարցին պատասխանելու համար մեզ օգնում է ինքը՝ մեր ժողովրդի գերմանացի բարեկամը և ականավոր հումանիստը: 1970 թ. օգոստոսի 17-ին տողերիս հեղինակը նամակ հղեց նրան՝ խնդրելով հայտնել հայ ժողովրդի վերաբերյալ գրած իր հոգվածների ցուցակը (նամակում շնորհակալություն էի հայտնել նաև նրա հայասեր գործունեության համար և շոշափել մի շարք այլ հարցեր): Ի պատասխան ես ստացա Վեդների 1970 թ. սեպտեմբերի 3-ի թվակիր նամակը (ուղարկված Հոռմից), որը օգտակար եմ համարում հրապարակել այստեղ աննշան կրճատումներով:

«Սիրելի պարոն Ստեփանյան...

Սրտագին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, իմ և հատկապես Հայաստանին նվիրված իմ երկարատև գործունեության նկատմամբ այդքան մեծ ուղադրության համար: Մեծ հաճությամբ կաշխատեմ ձեռք բերել Ձեզ անհրաժեշտ փաստաթղթերը և ընդհանրապես կցանկանամ օգտակար լինել Ձեզ: Ես խնդրում եմ Ձեզ որոշ ժամանակ սպասել, քանի որ ես այժմ քարտուղարուհի չունեմ, այդ հարցը կլուծվի հոկտեմբերին:

Այնուամենայնիվ կարող եմ հայտնել, որ գերմաներեն լեզվով բավականին գործեր գտնվում են Երևանում: Ես դրանք նվիրել եմ հայ ժողովրդին՝ հանձնելով արտասահմանի հետ կուլտուրական կապերի հայկական ընկերությանը (Աբովյան փող. 3), որից հետո դրանք պետք է հանձնվեն Երևանում քաղաքի պետական գրադարանի տնօրինությանը: Հիշողությամբ թվարկում եմ իմ հետևյալ տպագիր և ձեռագիր փաստաթղթերը:

1) Հայ ժողովրդի տեղահանության վերաբերյալ 1919 թ. ամերիկյան պրեզիդենտին ուղղված իմ բաց նամակը. դա ես գրել եմ որպես կենդանի վկա անապատների արտաքսված հայ ժողովրդի տառապանքների, այն բոլորի, ինչը ինքս անձամբ տեսել եմ Սիրիական անապատներում: «Բեռլինյան օրաթերթում» հրապարակված այդ նամակը փարիզյան բանակցությունների ժամանակ պետք է անձամբ հանձնել ամերիկյան պրեզիդենտին: Դրանից հետո այն լույս տեսավ գերմաներեն:

2) «Ե՛րբ Արարատից», հրատարակվել է պացիֆիստ Հելեն Շտյոկերի կողմից 1922 թ. «Նոր սերունդ» ամսագրում:

3) «Կրակե գունդ» վերնագրով իմ հոգվածը, որը սկսվում է հետևյալ բառերով՝ «Երբ հետ ես նայում, ամեն ինչ վերականգնանում է»։ այնտեղ նկարագրված են իմ կրած ապրումները՝ հայերի նկատմամբ Աբդուլ Համիդի կատարած սարսափների ժամանակ: 1895—96 թթ. այնպիսի տպավորություններ եմ գործել իմ վրա, որ ես երբեք չեմ մոռանա:

4) «Հինգ մատներ քո վրա», գրված է 1928 թ.: Այն լույս է տեսել Շտուտգարտում 1929 կամ 1930 թ.: Այնտեղ նկարագրված է 1927—28 թվականների ձմռանը Հայաստան կատարած իմ այցելությունը: Բացահայտված են Գեր-

¹⁰ Նույն տեղում, էջ 5—6:

մանիայի Կոմունիստական կուսակցության շարքերը ընդունվելու իմ դրդապատճառները:

5) «Թալիսթ փաշայի դատավարության» առաջաբանը, որը լույս է տեսել 1921 թ. «Քաղաքականություն և պատմություն» գերմանական հրատարակչական ընկերության կողմից: Այնտեղ պատկերված է հայկական ջարդերի ամենամեծ կազմակերպիչ՝ Թալիսթ փաշայի դատավարությունը, որտեղ նրա սպանողին գերմանական արդարադատությունը արդարացրեց:

6) «Վրան», լույս է տեսել 1926 թ.: Դրա մեջ մտնում է նաև «Բանկիր» պատմվածքը:

7) «Պատանի Հուսեյնը» (նովելներ Թուրքիայի մասին): Այդ շարքում «Բանկիրից» բացի կա նաև մի հիանալի պատմվածք երիտասարդ հայ մոր ճակատագրի մասին:

«Ներխուժում կանանց բաղնիք», լույս է տեսել «Բեռլինյան օրաթերթում» 20-ական թթ. սկզբին, իսկ 1921 թվականին՝ առանձին գրքով:

8) Վերևում նշված «Ներխուժում կանանց բաղնիք» պատմվածքը զինվորի ճակատագրի մասին գրած նովելի հետ միասին ուսերեն լույս է տեսել Մոսկվայում 20-ական թթ.:

9) «Հայ մորը» պատմվածքը շատ կարևոր սորո է տարաբախտ հայ մոր ճակատագրի մասին: Հայերեն թարգմանել է Պ. Միքայելյանը, նրա թարգմանությունը այն լույս է տեսել նաև ուսերեն 1956 թ. Երևանում:

10) «Բարի լույսը» հոգվածը նվիրված է հայ ժողովրդի վերածննդի 50-ամյակին: Գրել եմ 1965 թ.: Լույս է տեսել հայկական մամուլում: Այն պարունակում է իր մեջ Բեյրութում իմ կատարած մի քանի լուսանկարներ: Արևմտագերմանական թերթերը հրաժարվեցին այն հրապարակել: Այն հրապարակվեց շվեյցարական «Աշխարհի շաբաթը» հանդեսում 1966 թ.:

Այսօրվա համար այսքանը:

Խնդրում եմ տեղյակ պահեք այս նամակը ստանալու մասին:

Բաբեկամական ողբոյններով Ձեր Արմին Թ. Վեգներ

Իմ մասին մի շատ կարևոր հոգված կարող եք գտնել պրոֆ. դոկտ. Ալբերտ Զյորգելի գրականության պատմության շարքից «Էքսպրեսիոնիզմի նախապաշարմունքների մեջ» («Ժամանակի պոեզիան և պոետները») գրքում: Լույս է տեսել 1925 թ. Լայպցիգում:

Արմին Վեգների կյանքում հուզիչ իրադարձություն հանդիսացավ նրա այցը Հայաստան: Մինչև Հայաստան գալը, 1927 թ. Ա. Վեգները և նրա կինը՝ Լոլա Լանդաուն, որպես առաջադեմ գրողներ հրավիրվում են Մոսկվա մասնակցելու Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի հանդեսներին: Նույն թվականին, Ս. Տեր-Գաբրիելյանի հրավերով նա ժամանում է Երևան որպես Խորհրդային Հայաստանի պատվավոր հյուր: Հանրապետությունում նա մնաց շուրջ երկու ամիս, ծանոթացավ վերածնվող Հայաստանին, նյութեր հավաքեց այդ մասին վեպ գրելու համար:

Հայաստան կատարած իր առաջին այցելության մասին նա հակիրճ գրել է. «Եկա Հայաստան ականատես լինելու մի ժողովրդի հարությանը, այո, հարությանը: Տեսա, թե ինչպես ժողովուրդը իր դագաղի կափարիչը բանալով դուրս է եկել գերեզմանից, բզկտված հագուստներով ու նվազած ուժով, սակայն Մաքառում է երկիր ստեղծելու համար: Ես տեսա հարության հրաշքը իր ամբողջ շքեղությամբ: Կարծես սա այն Հայաստանն է, նոր, բոլորովին նոր երկիր, իր նոր մայրաքաղաքով»¹¹:

Վերադառնալով հայրենիք, նա դժվարին ու ծանր ժամանակներ ապրեց: 1933 թվականի օգոստոսին Ա. Վեգները ձերբակալվում է գեստապոյի կողմից: Պատճառը Ա. Հիտլերի դեմ բուռն զայրույթով գրած «Բաց նամակն»

¹¹ Արմին Վեգների ձայնը, «Լրարեր» (ԱՄՆ), 31 հունվարի 1970:

էր: Նրանում նա մատնանշում էր, որ եթե վերջ չդրվի հակահրեական հալածանքներին, կպղծվի գերմանական մշակույթը, որի զարգացմանը նպաստել են հիմնական գիտնականները, գրողները, արվեստագետներն ու փիլիսոփաները:



Գերմանական գրող, հրապարակախոս, հայ դատի պաշտպան Արմին Վեգները համալսարանում 1968 թ. հոկտեմբերին: Ձախից՝ Մեհենդակ Մելիքյան, ռեկտոր Մկրտիչ Ներսիսյան, Արմին Վեգներ, Մկրտիչ Մկրյան (նկարը հրապարակվում է առաջին անգամ)

Նա սարսափելի տանջանքների ու խոշտանգումների է ենթարկվում, բանտից բանտ է նետվում, ճամբարից ճամբար է ընկնում: Դիմելով փախուստի, հայտնվում է Անգլիայում, Շվեյցարիայում, Մերձավոր Արևելքում և վերջապես հանգրվանում է Իտալիայում ու մինչև իր կյանքի վերջը ապրում և ստեղծագործում էր Հռոմում:

Վերստին Հայաստան այցելեց 1968 թ. սեպտեմբերին: 82 տարեկան Ա. Վեգները իր կնոջ՝ Իրենն Կովալիսկայի հետ եղավ Երևանում: Վերհիշելով և պատմելով հայոց ջեղասպանության, դարի առաջին մեծ ողբերգության մասին, նա մանկան պես զվարճանում էր, տեսնելով հնադարյան Երևանի նորակառույցները: Հոգու ուրախության պոռթկումով խոսում էր վերածնված Հայաստանի ծաղկուն կյանքի, նրա տնտեսական, սոցիալական, գիտական ու մշակութային աննախադեպ հաջողությունների մասին: Նրան ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը և հայանպաստ մեծ գործունեության համար պարգևատրեց Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով: 82-ամյա Ա. Վեգները հետիոտն բարձրացավ Միժեռնակաբերդ և հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին ծաղկեպսակ դրեց:

Հայոց ողբերգական պատմության և հայ ժողովրդի վերածնության կենդանի վկան այցելեց Մատենադարան, դասախոսություններ կարդաց Արտասահմանի հետ մշակութային կապի և բարեկամության հայկական ընկերու-

թյան դաշինքում, ցուցադրեց հայերի կոտորածները պատկերող մի շարք լուսանկարներ: Նա հիացած էր գեղատեսիլ Երևանի կառույցներով, գիտական ու մշակութային օջախներով, հզոր գործարաններով ու ֆաբրիկաներով, վերածնված ժողովրդի հաջողություններով:

Սեպտեմբերի 20-ին Ա. Վեգները հանդիպում ունեցավ Երևանի պետական համալսարանի կոլեկտիվի հետ: Գիտական խորհրդի ընդլայնված նիստում նա հարուստ ցանկությամբ կարդաց հայերի ու հրեաների ցեղասպանության մասին: «Երևանի համալսարան» թերթը գրել է. «Մթափում էր նրա դեմքը, երբ խոսում էր հայրենական կոտորածներից ու հրճվում էր, որ իր առաջ ծիփում, ծավալվում է նոր Երևանը, ուր խայտում է կյանքը: Նա պատմեց, թե ինչպես գերմանական իշխանությունները ձերբակալել են իրեն, որպեսզի խեղդեն հանուն հայերի, հանուն արդարության իր զորեղ ձայնը»¹²: Նա պատմել է, թե ինչպես երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հանդես է եկել ի պաշտպանություն հրեաների, վճռականորեն դատապարտել է այդ ժողովրդի դեմ իրագործված հալածանքներն ու հետապնդումները ու, դարձյալ ձերբակալվելով, ֆաշիստական զնդան է նետվել:

Իսթայելում կա մի անտառ, ուր մի մեծ ծառի վրա փակցված է մեծ ու արդար մարդու լուսանկարը: Այդ ծառը կոչվում է «Վեգների արդարության ծառ»։ Հանդիպման ժամանակ երախտագիտության խոսք է ասել ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը: «Միրելի Վեգներ, — ասել է նա, — հայ ժողովուրդը երախտապարտ է Ձեզ: Ձեր նկատմամբ տածած հարգանքն էր պատճառը, որ նա ձեր քան ջերմորեն ընդունեց Ձեզ: Հայերը սիրում են, երբ իրենց երկիրն են գալիս բարեկամները: Իսկ դուք, մեծապատիվ Արմին, հայության վշտի հետ քայլեցիք տասնյակ տարիներ և դարձաք մեր փորձված բարեկամը: Շնորհակալություն Ձեզ, հայության դատի անխոնջ ու անկաշառ պաշտպան, մեզ համար չհնացած բարեկամ, մեզ համար հայացած Արմեն Վեգներ»¹³:

Հայաստան կատարած երկրորդ, սակայն վերջին այցի կապակցությամբ Ա. Վեգները ասել է. «Ես, որ տեսել եմ այս ժողովրդի ջարդերը, ես, որ ձայնս բարձրացրել եմ հանուն այս ժողովրդի և տեսնելով աշխարհի քար սրտի պապանձվելը, անիծում էի ամբողջ աշխարհին, ահա եկա տեսա վերածննդված հայ ժողովրդին, բարձրացա Միծեռնակաբերդ, ծնկի եկա անգերեզման հայերի հավիտենական կոթողի առջև ու խոնարհվեցի նահատակների հոգին հատկանշող սևմար կրակի դեմ:

Տողանցեցին, տողանցեցին աչքերիս առջև անապատի քեմբերը, անապատի վրանները, անապատի սովահար մանուկները, անապատում համաճարակի զոհերը: Քչերը կարող են հասկանալ իմ ապրումները: Միայն նրանք կարող են չափել այս հրաշքի մեծությունը, որոնց աչքերի մեջ, ինչպես իմ աչքերի մեջ երևում են անապատի քստմենցնող պատկերները: Այս Երևանի առժեռ և իմաստը կրթունեն նրանք, ովքեր անցել են Դեր Զորը և Մեսքենի անապատներով:

Այստեղ հայությունը փրկված է վերջնականապես, մեկընդմիջտ: Երբ դիմարն Արարատ: է և Միծեռնակաբերդի վրա անցյալը հիշեցնող մշտավառ բոցն է, հալը այստեղ է և իր ճակատագրի տերն է»¹⁴:

Իր խոսքի վերջում Ա. Վեգները պատգամել է սփյուռքահայության պահպանման հրատապ խնդրի լուծումը: Նա կոչ է արել «Փրկել Արևմուտքի մեջ հետզհետե ձուլվող հայության բեկորները...»¹⁵:

Արմին Վեգները իր մահկանացուն կնքեց 1978 թվականի մայիսի 17-ին Հռոմում, 92 տարեկան հասակում:

¹² «Երևանի համալսարան», 27 սեպտեմբերի 1968:

¹³ Նույն տեղում:

¹⁴ «Արմին Վեգների ձայնը», «Լրաբեր» (ԱՄՆ), 31-ը հունվարի 1970:

¹⁵ Նույն տեղում: